

տաւոր... դիմացինը յանցաւոր բռնող ցեղին մէջ» գիտցաւ իր անձնական ցաւը պարտկել եւ ստոյիկեանի անայլայլ աչքերով մօտենալ ամէն բանի կամ պատահարի (Բաշալեան)։ Սուտը, դձուճն ու քէնը անծանօթ էին իրեն (Թէոդիկ)։

Բարոյական կորովը նոյնիսկ աքսորի ժամանակ չկորսնցուց (Թէոդիկ)։ Կտրիճ էր կեանքի բոլոր պատահարներուն եւ նոյնիսկ մահուան դիմաց (Թէոդիկ)։

Նաեւ բարի էր եւ իմաստուն (Թէոդիկ)։ Եւ մարդասէր՝ նաեւ որբ որդեգրելու օրինակը տալով (Թէոդիկ)։

Ընկերութեան մէջ՝ կենսութիւն էր, այս բառը կարծես յատկապէս իրեն համար շինուած ըլլար (Կիւրճեան)։ Մէկ քանի օր անցընել այդ աննման խօսողին ծիծաղեցնողին հետ, ի՞նչ տօն էր (Կիւրճեան)։

Անսպառ աղբիւր էր «արեւ չտեսած» ծաղրաշարժ գրոյցներու, բայց միւս կողմէն կատարեալ կենցաղագէտ էր, որ գիտէր կարեկցել ուրիշին գծրախտութեան (Թէոդիկ)։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Այս մէջբերումներէն կարելի է որոշ գաղափար մը կազմել Երուանդ Օտեանի մասին՝ իբր գրագէտ։

Սակայն մինչ ընդհանրապէս դասական գրագէտի եւ երգիծաբանի յատկանիշները բաւականաչափ շեշտուած են, քրոնիկադերի, վիպագիրի, թատերագիրի ու յուշագիրի արժանիքները միայն հարեւանցի կը շօշափուին։

Բնականաբար պարագայական դըրուածքներէ աւելի կարելի չէր սպասել։

Իբր մարդ՝ շատ կը դովուի։ Իր բարեկամները եւ ան ալ անոր դադաղին դիմաց, չէին կրնար Օտեանի թերութիւններուն վրայ ծանրանալ։

Սակայն յիշուած բարեմասնութիւնները իրական են, եւ կը բնորոշեն Օտեանի մէջ բազմաթիւ աղնիւ կողմեր։

Վերոյիշեալ գրութիւններէն, հետեւաբար, այն տպաւորութիւնը կ'ունենանք՝ որ Օտեան, ըլլա՛յ գրագէտ, ըլլա՛յ իբր մարդ, բազմաթիւ բարեմասնութիւններով օժտուած էր։

(Շար. 1)

Հ. ՅՈՒՍԵԿ ՊՈՒՇԼԻԿԵԱՆ

ՔՐԻՍՏՈՍ ԳԻՏՈՒԹԵԱՆ ԼՈՅՍԻՆ ԱՌՋԵԻ

Մարդկային Պատմութեան ամէնէն կարեւոր եւ լուսաւոր էջը կը պատկանի անտարակոյս Քրիստոսի։

Յիսուսի մասին նուիրուած են հազարաւոր հատորներ, որոնցմով կարելի է հսկայ գրադարան մը կազմել։

Մարդկութեան ծոցէն ելած են հաւաքներ, հերոսներ, սուրբեր։ Բայց բո՞ւստի այս դէմքերու մէջէն, ամէնէն վեհը, ամէնէն աւինքնողը՝ Քրիստոսի գէմքն է, որ քսան դարերու ընդմէջէն, արեւակի պայծառութեամբ կը շողայ տակաւին, հոգեկան կեանք եւ սնունդ բաշխելով աշխարհի։

Քրիստոս՝ մարդկութեան տուաւ կրօնք մը, որ սահմանուած էր կերպարանափոխութեամբ։ Այսինքն պատմութեան ճակատագիրը։ Անկա հիմնեց իւրաքանչիւր թագաւորուն թիւն մը, որուն սահմանները պիտի ըլլային աշխարհիս չորս ծագերը։

Կը հետաքրքրուինք մեծ մարդոց կեանքով, կը սորվինք երկրաւոր թագաւորութիւններու պատմութիւնը։ Կ'արժէ նաեւ թիւններու պատմութիւնը։ Քրիստոսի կեանքով եւ ուսումնասիրել Անոր վարդապետութիւնը։

* * *

Աւետարաններու մէջ կը պատմուի, թէ մեզմէ երկու հազար տարիներ առաջ, Հռոմայեցիներու Օգոստոս կայսրին ժամանակ, Մանուկ մը կը ծնանի՝ Պաղես-

տինի մէկ աննշան դի դի մը մէջ։ Հրաշապատում գէպքերով լի է Անոր ամբողջ կեանքը։

Անկա զեռ նոր լոյս աշխարհ եկած՝ հրեշտակներ կ'երեւին հովիւներուն, եւ աստղի մը առաջնորդութեամբ՝ հեռաւոր երկիրներէ մոգեր կու գան երկրպագելու Անոր, որուն անունը Յիսուս է։

Երեսուն տարի անծանօթ եւ անաղմուկ կեանք մը անցընելէ ետք, Յիսուս յանկարծ կ'երեւի հրապարակի վրայ, աշակերտներ կը հաւաքէ իր շուրջ, անթիւ հրաշքներ կը դործէ, հիւանդներ, խեղանդամներ, զիւհահարներ կը բուժէ, կը հրամայէ ծովին ու հովին, Ինքզինքը կը յայտարարէ Աստուծոյ Որդի, որ երկինքէն եկած է մարդկութիւնը՝ սատանայի տիրապետութենէն փրկելու եւ երկինք առաջնորդելու համար։

Անկա պարզ՝ բայց հոյակապ քարոզներ կը խօսի, թարմ շունչով ողողուած, գեղեցիկ խոստումներով ընդելուզուած նոր վարդապետութիւն մը կը սորվեցնէ եւ կը հիմնէ Նոր Եկեղեցի։

Երուսաղէմի մէջ, Ժողովուրդը խանդավառ ընդունելութիւն մը կ'ընէ Իրեն, բայց քանի մը օր ետք, հրեայ կրօնապետները ձերբակալել կու տան զինքը, եւ իբր մօլորեցուցիչ, կը յանձնեն Պիղատոսին, որու թոյլտուութեամբ՝ անարգանքի խաչին վրայ կը սպաննեն զԱյն։

Թաղումէն երեք օր ետք, սակայն, յա-

այլ նաեւ Հռոմի մէջ, ուր աշխարհիս բոլոր սոսկալի եւ ամօթալի բաները կը խուժեն եւ անթիւ յաճախորդներ կը գտնեն»³։

Շատ մը գիտնականներու համաձայն, Տակիտոս՝ Քրիստոսի վրայ այս տեղեկութիւնը հաւանաբար առած ըլլալու է իր բարեկամ՝ մեծն Պլինիոսէն։

Եթէ ճիշտ ըլլայ վերոյիշեալ ենթադրութիւնը, այդ պարագային Տակիտոսի վկայութիւնը աւելի արժէքաւոր կը դառնայ, որովհետեւ Պլինիոս, 70 թուականին, Երուսաղէմ գտնուած եւ ականատես եղած ըլլալով այդ քաղաքի կործանումին, Քրիստոսի եւ քրիստոնեաներու մասին ունեցած իր տեղեկութիւնները աւելի հին եւ անմիջական են։

Ամէն պարագայի, Տակիտոս համառօտ եւ անուղղակի կերպով կը խօսի Քրիստոսի մասին եւ իր տեղեկութիւնը հարկ չկար որ անպայման Պլինիոսէն առած ըլլար, քանի որ, իր իսկ վկայութեան համաձայն, քրիստոնեաներու բազմութիւն մը գոյութիւն ունէր Հռոմի մէջ, ուր ապրող զարգացած ունէ մէկը կրնար տեղեկ ըլլալ Քրիստոսի մասին։

Սուետոնի վկայութիւնը

Հռոմայեցի ուրիշ պատմիչ մը՝ Սուետոն, 120ին գրած իր «Տասներկու Կեսարներու կեանքը» հատորին մէջ կ'ըսէ թէ Կլոդիոս կայսրը, 51ի տոնները, «Հռոմէն վտարեց այն Հրեաները, որոնք Քրիստոսի ազդեցութեան տակ, տեւական պատճառ էին անկարգութիւններու»⁴։

Նոյն պատմագիրը Ներոնի կենսագրութեան մէջ ունի նաեւ սա տողերը. «Քրիստոնեաները չարչարանքներու ենթարկուեցան, մարդիկ՝ որոնք ինքզինքնին նոր եւ դէշ աւելորդապաշտութեան մը տուած են»⁵։

Սուետոնի ականարկած քրիստոնեաներու հալածանքին ճշմարտապատում ըլլալը կը հաստատուի նաեւ «Գործք Առաքելոց» դիրքին սա տողերէն. «Անկէ ետք, Պողոս Աթէնքէն մեկնելով եկաւ Կորնթոս։ Հոն գտաւ, ծագումով պոնտացի, Ակիլղաս ա-

նունով հրեայ մը, որ իր Պրիսկիլլա կնոջ հետ Խալկիդէն նոր եկած էր, Կլոդիոսի հրովարտակին հետեւանքով, որով կը հրամայէր բոլոր Հրեաներուն Հռոմէն հեռանալ»⁶։

Վերոյիշեալ դէպքերը պատահած են յիսուսական թուականներուն եւ ցոյց կուտան թէ այդ շրջանին արդէն, Յիսուսի մահէն 15-20 տարի ետք, քրիստոնէութիւնը թափանցած էր հռոմէական կայսրութեան սիրտը՝ Հռոմ։

Պլինիոսի վկայութիւնը

Կ'արժէ յիշատակել նաեւ կրտսեր Պլինիոսի՝ Տրայիանոսի ուղղած նամակը, որուն մէջ կը նկարագրէ Բիւթանիոյ մէջ գտնուող քրիստոնեաներուն կենցաղը։ Ահա մէջբերում մը իր գրածներէն.

«Քրիստոնեաներու հանդէպ ահաւասիկ իմ որդեգրած ընթացքս. սպառնալիքներով լի բազմութիւ հարցումներէ ետք, մեռցնել կու տամ զանոնք, որոնք կը յամարին տակաւին քրիստոնեայ յայտարարել ինքզինքնին։ Ոմանք կ'ուրանային քրիստոնեայ ըլլալին, կը զոհէին մեր կռուներուն եւ նոյնիսկ կ'անիծէին Քրիստոսը. բայց, ինչ որ կ'երեւի, նման բաներ, ճշմարիտ քրիստոնեայէ մը երբեք կարելի չէ սպասել։ ... Իմ հարցաքննութիւնս ցոյց տուաւ որ անոնք, որոշուած օրերուն, արեւը ծագելէ առաջ, կը հաւաքուէին տաղ մը երգելու համար Քրիստոսի, որպէս Աստուծոյ, եւ երգումով պարտաւորելու ինքզինքնին՝ ոճիւրներ չգործելու, այլ խուսափելու զոգութենէ, պոռնկութենէ. յետոյ՝ երեկոյեան կը հաւաքուին, շատ սովորական եւ անմիասն կերակուր մը ուտելու համար։ ... Անոնք շատ բազմաթիւ են իմ նահանգիս մէջ... այն աստիճան որ տաճարներու մէջ պաշտամունքը նուազելու վրայ է... եւ աս-

3. Անդ։

4. ՍՈՒԵՏՈՆ, Կղաղիոս, 25։

5. ՍՈՒԵՏՈՆ, Ներոն, 16։

6. Գործք Առաքելոց, ԺԸ. 1-2։

տուածներու զոհուած միւսը գրեթէ բնաւ զնուլ չունի»⁷։

Պլինիոս կրտսեր, որ Բիւթանիոյ եւ Պոնտոսի կառավարիչն էր, այս տողերը գրած է 112ին։ Անիկա Տրայիանոսի ուղղած նամակին մէջ իրապաշտ նկարագրութիւնը կ'ընէ առաջին քրիստոնեաներուն։ Պլինիոսի տուած տեղեկութիւնները այնքան նման են «Գործք Առաքելոց» դիրքին մէջ գտնուած նկարագրութեան, որ ո'չ ոք կը տարակուսի Պլինիոսի ըսածներուն վաւերականութեան մասին։

Ագրիանոս կայսեր հրովարտակը

Եւսեբիոս Կեսարացիի (265-340) «Պատմութիւն Եկեղեցւոյ» հատորին մէջ, պահած է Ագրիանոսի մէկ հրամանագիրը, որում 125ին եւ ուղղուած՝ Ասիոյ «փոխանակ ըղէշի»՝ Մինուկիոս ֆունդանոսի»⁸։

Կայսրը, որ արդարադատ մէկն էր, կախարդ, որ արդարադատ մէկն էր, լսելով քրիստոնեաներու դէմ եղած դատաստաններու ընթացքին տեղի ունեցող անարդարութիւնները, այս հրամանագրութիւնները, որ կը հրամայէ որ քրիստոնեաները ամբաստանողները անձամբ ներկայանան դատաւորին. իսկ եթէ սուտ ըլլայ իրենց դատաւորին, զրպարտողները անամբաստանութիւնը, զրպարտողները անխնայ պատժուին։

7. PLINIO IL GIOVANE, Epist. X, 96:
8. ՆԻՍԵՅԻՍՍ, Եկեղ. Պատմ., Վենետիկ, ԴԿ. Դ., ԿԼ. 9, էջ 254:
9. LUCIANO, Peregrino, 11 եւ 13:
10. CURETON, Spicilegium syriacum, էջ 43:

Ուրիշ վկայութիւններ

Վերոյիշեալ հեթանոս հեղինակներու վկայութիւններուն վրայ կարելի է աւելցնել նաեւ աւելի ուշ շրջանի պատկանող գրողներու վկայութիւններ։ Այսպէս, 170ի տոնները, Լուկիանոս Սամոսացին, «Ուխտաւորի մահը» խորագրով իր գրութեան մէջ, քրիստոնեաները պախարակելով կ'ըսէ. քրիստոնեաները «աստուածներու պաշտամունքը լքեցին եւ իբր Աստուած՝ Պաղեստինի մէջ խաչուած մարդ մը կը պաշտեն»։ Քրիստոս գիրենք համոզած էր թէ «ամէնքն ալ եղբայրներ են... Անոնք կը պաշտեն այս իմաստակ խաչեալը եւ կ'ապրին անոր օրէնքներուն համաձայն»⁹։

Կայ նաեւ Մարա Սեմացիին վկայութիւնը, որ իր Սրապիոն (73-160) որդիին ուղղած նամակին մէջ կը գրէ. «Ի՞նչ բանի ծառայեց Աթենացիներուն՝ Սոկրատը մեռցնելին, Սամոսացիներուն՝ Պիւթագորասը այրելին եւ Հրեաներուն՝ իրենց իմաստուն թաղաւորը խաչելը։ Աստուած իր ամբողջ արդարութեամբ այս երեք իմաստուններուն վրէժը լուծեց»¹⁰։

Մարա, այս նամակը գրած ըլլալու է 70էն ետք, ասորերէն լեզուով։ Նամակին ճշգրիտ թուականը դժուար է ճշտել, ինչպէս նաեւ յայտնի չէ թէ հեղինակը քրիստոնեայ է կամ հեթանոս։

(Շար. 1)

Հ. ԵՓՐԵՄ ՏԵՐ ՂԱԶԱՐԵԱՆ